

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Համախառն գյուղատնտեսական արտադրանք
0.2	Ոլորտը	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Գյուղատնտեսության և պարենային ապահովության վիճակագրության բաժին Բաժնի պետ Արսեն Ավագյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 52 44 49, +374 11 56 46 72 Էլ. փոստ՝ arsav@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	<p>Օգտագործողներին տրամադրել տեղեկատվություն ՀՀ-ում գյուղատնտեսության՝ բուսաբուծության և անասնաբուծության, համախառն արտադրանքի վերաբերյալ, եռամսյակային պարբերականությամբ:</p> <p>Ցուցանիշի հաշվարկումն ունի երկար տարիների պատմություն և վարվում է 20-րդ դարի 20-ական թվականներից: Տարիների ընթացքում այն պարբերաբար կատարելագործվել է՝ միջազգային դասակարգումներին, ցուցանիշների կազմին և այլ չափորոշիչներին համադրելիությունն ապահովելու նկատառումներով: 2011թ. հունվարից ցուցանիշը հաշվարկվում է դեսկրեկ, մինչ այդ այն հաշվարկվում էր կուտակային մեթոդով:</p> <p>Ներկայումս սույն ցուցանիշը, համաձայն «2019 թվականի վիճակագրական ծրագրի» Հավելված 1-ի «1. Իրական հատված, 1.2 Արտադրություն (ծառայություններ) ենթահատված, 1.2.2 Գյուղատնտեսություն և ձկնորսություն ոլորտ, տող 29, 122029 ծածկագրի, հրապարակվելու է միայն եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսական արտադրանքի արտադրության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության համահարթեցման</p>

		անհրաժեշտությամբ: Սույն մոտեցումը կիրառվում է միջազգային վիճակագրական պրակտիկայում: Այսպես, համաձայն Եվրամիության «Վիճակագրական պահանջների կոմպենդիում, 2018»-ի «3.1.2. Գյուղատնտեսության վիճակագրություն» ենթակետի, Եվրամիության անդամ երկրներում գյուղատնտեսության վիճակագրության հրապարակումները կրում են տարեկան պարբերականություն (հղում՝ https://ec.europa.eu/eurostat/documents/3859598/9393837/KS-GQ-18-009-EN-N.pdf/a1d2ffe9-2ba9-4b57-8e6c6c13575ef072 , 132-141 էջեր, հրապարակված 2018թ. հոկտեմբեր, ԵՄ, Լյուքսեմբուրգ):
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսավարկային կազմակերպությունները, գործարար միջավայրը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն: Ցուցանիշը կիրառվում է ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ցուցանիշի հաշվարկման հիմնական աղբյուրներն են. վիճակագրական ամփոփ և վիճակագրական հաշվետվություններով տեղեկատվություն տրամադրող համայնքները, իրավաբանական անձինք, հիմնարկները ու անհատ ձեռնարկատերերը, հարցաթերթերի միջոցով՝ գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված 12090 գյուղացիական տնտեսությունները ամսական պարբերականությամբ, ինչպես նաև Արմստատի համար վարչական ռեգիստր՝ հանդիսացող ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը՝ եռամսյակային պարբերականությամբ:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և

		«Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	<p>Համախառն գյուղատնտեսական արտադրանքի վիճակագրությունն ընդգրկում է ըստ ոլորտների՝ բուսաբուծության և անասնաբուծության, արտադրանքի հիմնական տեսակների արտադրության վերաբերյալ վիճակագրությունը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը բուսաբուծության և անասնաբուծության արտադրանքի գումարն է արժեքային արտահայտությամբ՝ տվյալ տարվա ընթացիկ գներով: Ցուցանիշը հաշվարկվում է բոլոր համայնքներից, գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից, Արմատատի համար վարչական ռեգիստր հանդիսացող ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից և ընտրանքային դիտարկման (12090 գյուղացիական տնտեսություններ) դաշտից հավաքված տվյալներով: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կազմում չեն ընդգրկվում անտառաբուծության, ձկնորսության և ձկնաբուծության ու որսորդության տվյալների արժեքները:</p> <p>Բուսաբուծության համախառն արտադրանքը հաշվետու տարում ներառում է ստացված հացահատիկի և հատիկաընդեղենի, տեխնիկական մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարաբուստանային մշակաբույսերի, պտղի և հատապտղի, խաղողի, կերային մշակաբույսերի արտադրանքի, գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի և բազմամյա տնկարկների տնկանյութի և այլնի արժեքը,</p> <p>բազմամյա տնկարկների հիմնման և մշակման արժեքը, բուսաբուծության արտադրանքի անավարտ արտադրության փոփոխության արժեքը (աշնանացանի, ցրտահերկի բարձրացման և այլ աշխատանքների ծախսերը, որոնք կատարվում են հաշվետու տարում՝ հաջորդ տարվա բերքի տակ):</p>

		<p>Անասնաբուծության համախառն արտադրանքը հաշվետու տարում ներառում է.</p> <ul style="list-style-type: none"> - գյուղատնտեսական կենդանու աճեցումից ստացված արտադրանքի (միս, կաթ, բուրդ, ձու և այլն) արժեքը, - գյուղատնտեսական կենդանու, թռչնի և այլ կենդանատեսակի աճեցումից ստացված արժեքը (ծնի, հավելվածի և քաշածի արժեքը), առանց իրացված մսի արժեքի, - մեղվաբուծության արտադրանքի արժեքը և այլն:
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p>Տեղեկատվության հավաքումն ընդգրկում է ՀՀ ամբողջ տարածքը՝ ներառելով ՀՀ բոլոր մարզերը, համայնքները, գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող իրավաբանական անձանց, հիմնարկներին ու անհատ ձեռնարկատերերին:</p> <p>Տեղեկատվությունը հավաքվում է ըստ գյուղատնտեսական արտադրանքի հիմնական տեսակների՝ բուսաբուծական (հացահատիկ և հատիկաբերեղեն, կարտոֆիլ, բանջարեղեն, բոստան, պտուղ և հատապտուղ, խաղող և այլն) և անասնաբուծական (միս, կաթ, ձու, բուրդ և այլն):</p> <p>Հրապարակման խմբավորումներ</p> <p>Տվյալները հրապարկվում են համախառն գյուղատնտեսության ինչպես նաև ըստ ոլորտների՝ բուսաբուծություն և անասնաբուծություն:</p>
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Եռամսյակային, տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հավաքվում են տարեկան ծրագրերով սահմանված ժամկետներին և ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Եռամսյակային, տարեկան
3 .Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	<p>Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում:</p> <p>Տեղեկատվությունը տրամադրում են համայնքները,</p>

		<p>իրավաբանական անձինք, հիմնարկները, անհատ ձեռնարկատերերը, Արմաստատի համար վարչական ռեգիստր հանդիսացող ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ինչպես նաև 12090 գյուղացիական տնտեսությունները: Ստացված տեղեկատվությունն ամփոփվում է մարզային և ք.Երևանի կտրվածքով: Տնտեսավարող սուբյեկտների ընդգրկումը և դրանց կողմից պաշտոնական վիճակագրական տեղեկությունների պարտադիր տրամադրումն ամրագրված է վիճակագրության ոլորտը կարգավորող իրավական փաստաթղթերում:</p> <p>Պատասխանների մակարդակը մոտ 98% է:</p>
3.2	Անճշտության աղբյուրները	Հավաքվող տեղեկատվության տեսակների փոփոխություն չի իրականացվում:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Ներկայացված տվյալների ճշգրտության ստուգումներն իրականացվում են յուրաքանչյուր մշակաբույսի համախառն բերքը և անասնաբուծական արտադրանքի ծավալը (տվյալ ժամանակահատվածում) համեմատելով ինչպես նախորդ տարիների համապատասխան ցուցանիշների, այնպես էլ գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված 12090 գյուղացիական Տնտեսություններից մարզային կտրվածքով ստացված համապատասխան ցուցանիշների հետ:
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Մինչև 1998թ. ցուցանիշը ներկայացվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: 1998-2001թթ. կիրառվել է Միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգչի (ՄՍՃԴ) 3-րդ խմբագրությունը (ՄԱԿ): Սկսած 2002թ. ցուցանիշը ներկայացվում է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին համապատասխան (մշակված ԵՄ վիճակագրական ծառայության կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ NACE հիման վրա): 2010թ. կիրառվում է ՏԳՏՀԴ խմբ.2-ը:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Ոլորտի վերաբերյալ այլ վիճակագրություն չի վարվում:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Հավաքվող ամսական, եռամսյակային և տարեկան կտրվածքով տեղեկատվությունը, որի հիման վրա հաշվարկվում է ցուցանիշը տարեկան կտրվածքով վերանայվում է տնտեսավարող սուբյեկտների կողմից:

		Տարեկան կտրվածքով ճշգրտված տեղեկատվության հիման վրա ցուցանիշը վերահաշվարկվում է, ինչպես եռամսյակային այնպես էլ տարեկան կտրվածքով: Վերջնական տվյալները ներկայացվում են տարեկան հրապարակումներում:
5. Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	Էլեկտրոնային, թղթային
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Ռեսպոնդենտներից հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով:
5.3	Փաստաթղթավորում	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373:
5.4	Այլ տեղեկատվություն	
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: